

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ. - Արքայազն Պետրոս Ա. Կաթողիկոս և Մխիթար Արքայազն . 49

ԳՐԱԿԱՆ

Հ. Յ. Զ. - Զմամու հայ վանքին Յորելեանը . 55

Հ. Մ. ԶԱՆԱՇԵԱՆ. - Բաբել (գրական ակնարկ) . 57

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆ. - Կանոնը և լույսը . 63

» » » - Մենախոսություններ Քաջի վարդանի . 91

Շ. ՊՈՏԼԵՐ. - Արքայազններ (թղթ. Մարի Ա. Բաճեան) . 75

Հ. ՅՈՒՇԻԿ ՊՈՒՇԼԻԿԱՆ. - Բեթլեհ Շանար (շար.) . 76

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ՃՐՏ. Ս. ԶԱՎԱԶԻՐՃԱՆ. - Հայկական ռազմաճարտարագիտությունը (շար.) . 64

ՊԱՏՄԱԿԱՆ

ՏՈՒԹ. Յ. ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆ. - Բերդու . 81

ԿՐՕՆԱԿԱՆ

Հ. ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԵԱՆ. - Արքայական կանոնների հարցեր Հայ եկեղեցու վարդապետությանը (շար.) . 84

ԳՐԱԹՕՍԱԿԱՆ

Հ. Մ. Զ. - Արամայիս Արքայանի «Հանդիպումներ Մուսայի հետ» . ապ. վ. Կենտրիկ - Ս. Ղազար, 1949 . 93

Հ. Յ. ՊՈՒՇԼԻԿԱՆ. - Ունի-Ս. «Որբերը» . ապ. Պաշտու-Արքայ, 1940 . 94

ARTICLE DE FOND

P. Mesrop Djanachian. - Le Catholikos Abraham Pierre I, et l'Abbé Mékhi-tar . 49

LITTÉRATURE

P. I. Tch. - Le Jubilé du Couvent arménien Bzommar . 55

P. M. Djanachian. - Raffi (critique littéraire) . 57

P. E. Der-Ghazarian. - Ma vie . 63

» » » - Monologue du héros Vardan . 91

Ch. Baudelaire. - Correspondances (trad. par Marie Atmadjian) . 75

P. Houssik Bouchliguian. - Petöfi Sándor . 76

BEAUX ARTS

Ing. S. Djévalir. - L'architecture militaire arménienne (suite) . 64

HISTOIRE

Dr. H. Der-Ghazarian. - Pertusus . 81

RELIGION

P. Nersès Der-Nersessian. - Questions de la vie future dans la Doctrine de l'Eglise Arménienne (suite) . 84

RECENSION

P. M. Dj. - «Rencontres avec la Muse» ed. St. Lazare, Venise, 1949 . 93

P. H. Bouchliguian. - «Les Orphelins» de Rind, ed. Buenos-Aires, 1940 . 94

ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1950
108-րդ ՏԱՐԻ



ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ
ԹԻՒ 3-4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՔՐԱՀԱՄ - ՊԵՏՐՈՍ Ա. ԿԱԹՈՒԼԻԿՈՍ

ԵՒ

ՄԻԹԱՐ ԱՐԲԱՀԱՅՐ

Պատմական զուգահեռությամբ մը՝ տարբեր աստղերու տակ ծնած երկու փառահեղ զէմքերու ծն. դարու Հայ եկեղեցական պատմութեան, որոնք կատարած իրենց դերը, միեւնոյն տարին կ'անցնէին անմահութեան, 1749 Ապրիլ 27-ին՝ Մխիթար Արքայազն, և Հոկտեմբեր 1-ին՝ Արքայազն Պետրոս Ա., անգրանիկ կաթողիկոսը վերանորոգեալ Հայ Կաթողիկէ Համայնքին: Զոյգ յորելեաններ՝ որ հրաւիրեցին Հայ Մամուլին ուղղորդութիւնն ու յարգանքը անոնց յիշատակին հանդէպ:

Գարձեալ գեղեցիկ ու փրկարար զուգահեռությամբ մը կապած էր այդ երկու մեծ հոգիները 1697-ին, հաւանաբար Պոլսոյ մէջ, երբ Արքայազն տակաւին որոնելու հետ ճշմարտութեան ուղին, ապագայ մեծ Լուսնորոգէն կը ստանար առաջին ճառագայտանոցներէն կը ստանար իր արշաւը իր հաւատքին, որ ապա իր արշաւը իր հաւատքին գունդերուն վրէպէր իր իրաւունքներէն արեւ մը հիմը դնելով Հայ Կաթ.

Նուիրապետութեան: Արքայազն ինքնին արձանագրած է սա պատմական տողերը. «18 տարեկանին սկսայ ճանչնալ կաթողիկէ ճշմարտութիւնը յարգոյ Մխիթար Արքայէն՝ որ այժմ կը բնակի Վենետիկ (Ինքնակենսագրութիւն, գրուած 17, Սեպտ. 1720. Գիւան Զմամու, տուի 4):

Այդ արձանագրութենէն երեք տարի առաջ, գարձեալ ուրիշ առիթով մը՝ ան յանձնած է պատմութեան սա տողերն ալ. «Ի մեր յազգէ վերապատուելի Մխիթար Արքային միաբանք, որ այժմ ի Վենետիկ կան ի վանքն Սրբոյն Ղազարու և յոյս տան ազգիս մերոյ. (Գիւան Զմամու, Արկղ Ա. Տումար Բ. Թիւ 28):

Արքայազն (ծնած Այնթապ 12 Ապրիլ 1679-ին) գտած էր յոյսի ճամբան. իր միտքը ու հոգին տարուած այլեւս յոյսի վարդապետութենէն՝ կը քալէր կերտելու իր ապագան: Վեց տարի անընդհատ կը նուիրուի հարստացնելու իր միտքը աստուածաբանա-

կան գիտութեամբ՝ Մերտինի նշանաւոր վարդապետ Մելգոն Թաղապետանի մօտ (յետոյ եպիսկոպոս), աշակերտ Ուրբանեան վարժարանին։ Մնողաց ընդդիմութիւնն ու աշխարհ կը հրապուրեն զինքը հրաժարելու իր նպատակէն, բայց ան փախչելու համար երկրաւոր փափկութիւններէն՝ կը լքէ հայրենի յարկը, կ'անցնի Մարաշ, անկից Էջմիածին՝ սրբութեան ու գիտութեան ծաւալով, ուսկից յուսախաբ կը դիմէ ապա Սոյ Կաթողիկոսարանը, ուր Պետրոս-Պիւծակ Կաթողիկոսին ձեռքին տակ որպէս «գրագիր, գանձապահ և խորհրդակից» կը պաշտօնավարէ ատեն մը, կը ստանայ անկէ կիսասարկաւագի ուսարկաւագի սուրբ աստիճանները, ու քահանայութեան օծումը 1706-ին։ Ժամանակները տխուր են... եղբայրաբաւ ու ազգակործան հալածանքներ կը հետապնդեն զինքն ալ, բայց նա անտեղիտալի իր ծրագրին ու կոչմանը մէջ՝ կը քալէ ի հեճուկս հակառակութիւններու։ Կը ստանայ վարդապետական գաւազանն ալ նոյն Պետրոս-Պիւծակ Կաթողիկոսէն, կը շրջի գիւղեր ու քաղաքներ, ամէնուրեք քարոզելով Կաթողիկէ դաւանանքը աներկիւզ ու անխոտոր։ Հալէպ, Սանթապ, հմայուած են իրմով։ Հալէպի ժողովուրդին ու քահանաներու դասին խնդրանքով 1710-ին կ'օծուի եպիսկոպոս Հալէպի, ինչպէս կը պատմէ իր ինքնակենսագրութեան մէջ։ Սանահեան կը սկսին դժուարագոյն օրերը իր կեանքին։ Իր եպիսկոպոսական ձեռնադրութիւնը, որուն համար Աբրահամ պայման դրած էր զինքը օծող Կաթողիկոսին՝ չնգովել Սուրբ Լեւոնի Տումարը և Քաղկէդոնի Ժողովը, կը զրգոէ թշնամութիւնը Պոլսոյ պատրիարքին՝ Սահակ Ապուլեիսցիին (1708-1714), որուն առաջին սպառնալիքը կ'իյնայ Սոյ Կաթողիկոսին վրայ՝ աքսորելով զայն Պարսկաստան, ուր կը վախճանի ողջամիտ ու բարի ծերունին։ Աբրահամ կը վտարուի իր Հալէպի թեմէն։ Բայց նա անվեհեր՝ Քրիստոսի ճշմարիտ առաքեալի պէս՝ բոլոր այն քաղաքներու մէջ ուր կ'ա-

պաստանի իր փախուստի ընթացքին՝ Սիւ, Կեսարիա, Ղազարիա, ամէն տեղ կը քարոզէ ճշմարիտ հաւատքը։ Կը յաջողի Պոլսոյ Յովհաննէս Գանձակեցի (1714-1715) պատրիարքին հաճութեամբ ստանալ Տրապիզոնի առաջնորդութիւնը, կը ծաղկեցնէ տեղւոյն չորս եկեղեցիները։ Կը հասնի հոն Յովհաննէս Կոչոտ պատրիարքին սաստը՝ որ յաջորդած էր Գանձակեցիին, ու նետել կուտայ զինքը ալեւալ գոչիկ մէջ՝ ըստ իր բացարձակեան (Ինքնակենսագրութեան մէջ), որ անշուշտ խոնարհ թաւալ մ'էր, ինչպէս խոր վիրաւը, ուր նետուեցաւ երբեմն մեր հաւատքին հայրը՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ։ Չարամիտ պատրիարքը կը գործէր Սուրբ Թանին հրովարտակին ուժովը, բայց Տրապիզոնի ժողովուրդը ձեռք կը բերէ հուսկ իր եպիսկոպոսին ազատութեան հրամանը. այդ պարագան կը զայրացնէ պատրիարքը՝ որ այս անգամ կրկին հրովարտակով մը՝ ձերբակալուած բերել կուտայ Պոլիս Քրիստոսի խոստովանողը ու դատաւարաւ թիապարտութեան։ Իրեն հետ դատաւարատուած են ուրիշ եպիսկոպոսներ ալ, ինչպէս Մերտինի առաջնորդը՝ Մելգոն Թաղապետան արքեպիսկոպոսը՝ որ այդ չարաբանքներու տակ կը կնքէ իր մահկանացուն։ Մինչ ուրիշներ կ'ուրանան իրենց հաւատքը, Աբրահամ հաստատուն է և զուարթ՝ կրելով։ 1717-ին ազատած իր տանջանարանէն՝ կ'անցնի քարաղելու Եղեւիտ, Տիգրանակերտ, Մարտին. կարճ կը տեւեն խաղաղութեան տարիները, ու նա դարձեալ Սոյ Յովհաննէս Հանցի Կաթողիկոսին ու Պոլսոյ Յովհաննէս Կոչոտ պատրիարքին թշնամութեան զոհ կ'երթայ, և կը նետուի Աշրաւ Առաւ ամայի կղզին, ուսկից այս անգամ կ'ազատի Քրիստոս. թարպէյի միջոցաւ։ Աստանդան կան ու տարագրեալ հովիւր, տառապագին կը հասնի Գրէյմ, ուր միաբանական կեանք մը սկսած էին Յովսէփեան չորս եղբայրները, որոնց գործին ջերմութիւն և ոգեւորութիւն կուտայ Աբրահամ եպիսկոպոս 1722-ին։ Այդ միաբանական կորիզը կը կոչուի Անտո-

նեան միաբանութիւն՝ հիմնուած ըլլալով Ս. Անտոնի կանոններուն վրայ։ Ժամանակները կը քալեն դէպի աւելի փառաւոր պատկում իր առաքելաջան տքնութիւններուն։ Կաթողիկէ հայերը, կը վճռեն այլեւս կազմել առանձին հասարակութիւն մը, վերջ տալու համար եղբայրասպան հալածանքներու։ Կը հրաւիրեն Հալէպ Աբրահամ եպիսկոպոսը, ու միաժամանակ խնդրանք կը ներկայացնեն Ս. Աթոռին՝ որ շնորհուի իրենց առանձին Կաթողիկոսութիւն ունենալու արտօնութիւն։ 1739-ին Աբրահամ կը հասնի Հալէպ, յաջորդ տարին կը ձեռնադրէ Յակոբ վարդապետ Յովսէփեանը՝ եպիսկոպոս Հալէպի, Սահակ վ. Բարսեղեանը՝ եպիսկոպոս Քիլիսի, և Մարգար վ. Թուհմանեանը՝ Մարտինի թեմին, և ինքը կ'ընտրուի Կաթողիկոս ու կ'օծուի լիովին համաձայնութեամբ եպիսկոպոսներու և քահանայից դասին, ներկայութեամբ ժողովրդեան։ Կը հասնի հաստատութիւնը Հոռմէն։ 1741-ին ճամբայ կ'ելլէ Կաթողիկոսը դէպի Հոռմ և կ'ընդունուի Բենեդիկտոս Ժ. Սրբազան Քահանայապետէն, որ 1742 Նոյեմբեր 26-ին, Ծիրանաւորաց ժողովին մէջ պաշտօնապէս կը հռչակէ զինքը Կաթողիկոս Կաթողիկէ Հայոց, և նոյն տարին 8 Դեկտեմբերին Անարատ Յղութեան տօնին՝ անոր կը շնորհէ պալիումը։ 1743-ին դառնալով Գրէյմի վանքը՝ իր արդիւնքներով կը վախճանի 1 Հոկտեմբեր՝ 1749-ին։ Մահէն առաջ սակայն յանձնած էր եպիսկոպոսներու Ժողովին, որ Զմամուի լեռներուն մէջ կանգնեն նոր պատրիարքական աթոռը, զոր կը սկսի իրագործել իր անմիջական յաջորդը՝ Յակոբ-Պետրոս Բ. Յովսէփեան (1749-1753) ու լրման կը հասցնեն անոր յաջորդները՝ Միքայէլ-Պետրոս Գ. Գառապարեան (1753-1780), Բարսեղ-Պետրոս Գ. Ազատեան (1780-1788), Գրիգոր-Պետրոս Ե. Քիւրեւեան (1788-1812), Գրիգոր-Պետրոս Զ. Զեբանեան (1812-1840), Յակոբ-Պետրոս Ե. Հոլասեան (1841-1843), Գրիգոր-Պետրոս Ը. Տէր Աստուածատուրեան (1843-

1866), որոնք հետզհետէ կը կատարելագործեն հիմնարկութիւնը եկեղեցիով մը՝ նուիրուած ի պատիւ Փոխման Ս. Կուսին, Կղերանոցի կառուցումով և կալուածներու գնումներով։ Գրիգոր-Պետրոս Ը. էն վերջ պատրիարքական աթոռը կը փոխադրուի Պոլիս՝ Անտոն-Պետրոս Թ. Հասունեան պատրիարքով, ու միջազգային առաջին պատեւրազմէն վերջ՝ դարձեալ կը վերահաստատուի Լիբանանի ամէնէն ծաղկեալ եկեղեցին՝ Պէյրութի մէջ։

Այն հոգեկան կապը և սրտակցութիւնը, որ պատանի Աբրահամը 1697-ին միացուց Մխիթարի հետ, ժամանակի ընթացքին աւճած ու զօրացած է երկու Առաջնորդներու միջեւ։ 1741, Յուլիս 18-ին գրուած նամակ մը նոյնինքն Աբրահամ պատրիարքէն առ Մխիթար Աբրահայր, յայտնի ապացոյց մ'է այն խորին յարգանքին և սիրոյն՝ զոր ան կը տածէր Հայ Լուսանորդին հանդէպ։ Նամակին տիտղոսն անգամ «Ամենապատուելի և սիրելի Մեծի Աբրայի Մխիթար՝ աստուածաբանութեան վարդապետաց վարդապետի, ողջոյն հանդերձ հայրապետական օրհնութեամբ» բխած է սրտէ մը, ուր կը բաբախէ անկեղծութիւն, յարգանք ու սէր։ Աբրահամ պատրիարք կը գրէր այդ նամակը խնդրելու համար Մխիթար Աբրայէն որ Անտոնեան միաբանները ընդունի իր միաբանական կարգին մէջ՝ յանձնելով անոր վարչութիւնը Լիբանանի Միաբանութեան, որովհետեւ, կ'ըսէ ան. «Եթէ դու կամիս և մեք, և մերայինքն յօժար կամօք կամիմք ի ներքոյ ամենասուրբ հնազանդութեան Աբրայիդ կեալ և մեռանել. և յոյժ երեւի մեզ բարեգունեղ զի լուսաւորեցեր զարեւելս ի յարեւմտից, ապա որչափ օգուտ և լուսաւորութիւն լինելոց է խեղճ ազգիս մերոյ, և կամ մեզ տգիտացս, յորժամ հասանի ի յարեգակնէդ լոյս կրօնի կանոնի և կառաւարութեան վասն փառացն Աստուծոյ և



406-71

Միևիթար ինքն էր որ առաջին կայծը վառած էր այդ լուսաւոր գաղափարականին, երբ կը բանար Արրազամ պատանին հոգւոյն աչքերը դէպի ճշմարտութեան լոյսը, ու այն օրէն Արծիւեանը՝ արծուօրէն կը խոյանար այդ մասնանշուած բարձունքը, թէեւ ըլլայ անկա շահուած տառապագին ելքով մը: Հայ կաթողիկէ Նուիրապետութիւնը ունի այսպէս Միևիթար Արրազօր մէջ՝ իր անուրանալի հիմը, անոր՝ որ իր բովանդակ էութիւնը, մտքի ու կամքի գրեթէ գերմարդկային պայքարը ի սպաս դրաւ այդ գերազանց նպատակին: Արեւելքէն դարձնելով իր աչքերը դէպի արեւմուտք, Միևիթար հետամուտ էր ոտքի հաստատուն կոռուան մը գտնելու Եւրոպայի մէջ, որպէսզի իր ազդանուէր գործը ամրապնդէր լուսոյոյն պայմաններով ու ստեղծէր տեւական ազդրիւր մը Լուսաւորութեան հայ տառապալու ժողովուրդին հոգեկան ու իմացական բարձրութեան համար: Ու մինչ արեւելքի մէջ, Լիբանանի լեռներուն և Սիւրիական հողերուն վրայ սփռուած քաղաքներ ու գիւղեր՝ Արրազամ կաթողիկոսի անխոնջ եռանդին բարիքները կը վայելէին, Միևիթար Վենետիկի մէջ կը կերտէր այդ միեւնոյն նպատակը յաւերժացնող ու հիմնաւորող լուսաւոր Կեդրոն մը, որուն բովանդակ ազգը պիտի նայէր միշտ ակնկառոյց ու յուսապատար: Մէկ էր վախճանը այդ երկու հոյակապ դէմքերուն ժԸ. դարու հայ եկեղեցւոյ պատմութեան, որոնք տարբեր ուղիներով ձկտեցան իրենց երազածը դարձնել շօշափելի իրականութիւն: Փառք զոյգ անմահներու յիշատակին, որոնց պանծալի կեանքն ու զօրծը արժանապատիւ կերպով ոգեկոչեց Հայ Մամուլը 1949-ի ընթացքին և դեռ պիտի նորոգէ ներկայ տարւոյն մէջ:

* * *

Յորեկանները հանգրուաններ են, ուր կը հանգչին մտքերը խորհրդածելու համար անցեալին վրայ: Բայց ցաւալի է նշել որ

այդ արիւնահեղ նահատակութիւններու օրերէն՝ երբ Արրազամ կաթողիկոս ու Միևիթար Արրազայր կ'ենթարկուէին անլուր հաւածանքներու իրենց եղբայրներէն՝ մինչեւ այսօր քիչ բան փոխուած է մեր ազգին մտայնութեան մէջ: Այսօր այդ տաք պայքարը զոյգութիւն չունի, բայց կայ ատոր զլխաւոր գրգռատաճառը՝ կրօնքի և ազգի գաղափարներուն շփոթ մտայլը՝ որ տակաւին աւերներ կը գործէ մեր մամուլի էջերէն ներս: Ժամանակը երկու դարերու անջրպետով՝ բուժած չէ դեռ մեր վէրքը: Երբ Միևիթար կը գրէր ու կ'աղաղակէր «Կրօնքս չեմ զօհեր ազգիս, և ոչ ազգս կրօնքիս», երբ Արրազամ կաթողիկոս յանուն ճշմարտութեան և Լուսաւորչի ոգւոյն, կը քարոզէր հաւատարմութիւն նախնեաց կրօնական ըմբռնումին և տիեզերական եկեղեցւոյ հետ անհրաժեշտ հաղորդութեան, անոնք նպատակ ունէին շեշտելու՝ թէ ազգի մը հոգեկան ու իմացական մակարդակին բարձրութիւնը պիտի կայանայ այդ զոյգ գաղափարներու համեմատ ձուլման մէջ, առանց տեղ տալու մոլեռանդն ընդդիմութիւններու՝ ի վնաս ազգային միութեան:

Ապագան որ կը բացուի մեր աչքերուն դիմաց՝ յոյսով ողորուն է. ունինք այսօր զարգացած եկեղեցականներ, և աւելի եւրոպականացած Հայ Մամուլ մը, որ կրնայ անառարկէն քննել հարցերը, լուսաւորել մաքերը և ըլլալ արդար իրաւարար: Եթէ մէկ է ճշմարտութիւնը, կրնանք վստահօրէն տածել յոյսը՝ որ օր մը ելած անել և խաւարչաին շաւիղներէն՝ պիտի դանք միանալու նոյն սեղանի շուրջը ու ողջունել զիրար եղբայրաբար, և այսպէս իրագործել այդ երկու հոյակապ դէմքերուն գաղափարականը: Հայ կաթողիկէ Նուիրապետութեան Աթոռին վրայ կը բազմի այսօր լուսամիտ ու լայնախոհ պատրիարք մը, ծանօթ միջազգային հրապարակի վրայ իր ծիրանաւորական պատուանշանով, իր գիտութեամբը և բարձր զարգացումով երեւելի՝ ճշմարիտ Հովիւ մը, որ իր մէջ կը խառնէ մեր պատ-

կառելի Հայրապետներուն ոգին, առաքինութիւնները, ազգասիրութիւնը՝ ապացուցուած անհերքելի փաստերով, թէեւ անարգարօքն գոտափետուած կողմնակցական մամուլէն՝ անկարող անոր հեռատես ու զգուշահայեաց քաղաքականութեան խորը թափանցելու: Միևիթարի Տունը, հաւատարիմ աւանդապահ իր Մեծ Հիմնադրի գաղափարականին, կը շարունակէ այսօր իր ազգանուէր գործունէութիւնը աւելի արդիական ձեւի տակ, շնորհիւ անմահ Սերաստացւոյն արժանաժառանգ յաջորդին՝ Գերպ. Սրա-

պիոն վրդ. Ուլուհոնեանի, որ օժտուած գերդնահատելի ձիրքերով մտքի ու սրտի, գալիք օրերու երջանիկ հեռապատկերովը խանդավառ, իմաստուն և խորահայեաց դիտող մը կեանքին ու մարդկային հոգեբանութիւններու, կ'ուղղէ զեկը Միաբանութեան դէպի իր գրական ու կրթական բարձր նպատակները: Այս բոլորը գեղեցիկ գրականն է պայծառ ապագայի մը, Գ. Գարազարձին, որուն հորիզոնը արդէն կարմրած է յուսավառ արեւով:

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ

Զ Մ Մ Ա Ռ Ո Ւ Հ Ա Յ Վ Ա Ն Ք Ի Ն Յ Ո Ւ Ե Լ Ե Ա Ն Ը

1749-1949

Տօնի մէջ է հայ Լիբանանը: Արեւելքէն ու արեւմուտքէն հոգեւորական թէ քաղաքական տկանաւոր դէմքեր կը խըմբուին շնորհաւորելու հայ պատմութեան մէկ էջը, անվերապահօրէն խնդակցելու ի տես հայ գործին տեւականութեան:

Տօնի մէջ է հայ Լիբանանը. երկու դարերու պատմութիւնն է որ կ'ամփոփուի ու կը համառօտուի հանդիսական ներկաներու առջեւ, երկու ապրուած դարերու՝ որոնց արժէքը, սակայն, անկարելի է կշռել ու պարզել հանդէսի մը երկու ծափերուն միջեւ: Այդ երկու դարերուն մէջ կերտուած է տաճար մը՝ որուն ամէն մէկ քարը յոգնութիւն է, արցունք է, արիւն է: Երկու դարերու հայ կամքը և զոհողութիւնը, թէպէտ շուքի մէջ, կրցեր է ծառանալ ու տալ գաղափարի նահատակներ:

Բայց միանգամայն լինչ տխուր հեռապատկեր. կը տօնուի նաեւ նժգեհութիւնը, զոր հայը պարտադրեր է իր եղբոր, թէպէտ շողի և փայլի մէջ գրուած է միայն այդ նժգեհութեան յաղթական ախոյեաններու անձնուէր գործունէութիւնը:

Ո՞ր վատ ոգին սորվեցուց հայուն բար-

ձրացնել իր եղբայրադու բազուկը և իր արժէքները տարտղնել օտար ափերուն վրայ: Ահա հայութեան բեկոր մըն ալ՝ որ ապաստան կ'ընտրէ Լիբանանի մայրիկներու հովանին:

Լիբանան հինէն ի վեր ապահով բոյնը եղեր էր անկախութիւնը սիրող արծիւնեւորուն. հոն դիմած են ցեղեր ու խումբեր աւելն անգամ՝ երբ բռնութիւնը ուզեր է զսպել ազատութիւնը. ժԸ դարու կիսուն հոն կը դիմէ Արծիւեան Արրազամ նորընտիր պատրիարքը իրեններով:

Ծնած 1679-ին Այնթապի մէջ, Արրազամ շրջած է և տկանատես եղած՝ իր համազգիներու հոգեկան կացութեան: Սիրոյ կրօնքը ատելութիւն կը հրդեհէ տգէտ և խռովայոյզ սրտերու մէջ, և Արրազամ կը փորձէ թեւածել ամէն կողմ իր ձիթենին կարկառելով ամէնուն: Եպիսկոպոս է, Կաթողիկոս՝ Պատրիարք է իր համայնքին, սակայն դեռ կը թիալարէ յորձանքներու մէջէն, փնտռելով կայան մը: Ի զմեռ 1749-ին կը փակէ իր աչքերը, որոնք պահ մը յառած էին յոյսով՝ Զմմառի բարձունքին վրայ պատկեւապող չէնքի մը: Արծիւեան Կաթողիկոս-